



Ի ՏԵՂԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ Ի

ՍԱՐԳՍԻ ԿԱՐՆԵՑԻՈՅ ԱՍԱՅԵԱԼ
ԲԱՆ ՎԱՍՆ ՄԱՅԻՍԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԱՅ
ԱԶԳԻՍ ՀԱՅՈՅ.

Ի Զուգայ եւ ի Տիգրայ (Ամբ աշխարհի 521),
Ի Խառան (Ամբ աշխարհի),
յԱսարայր (Ամբ Տեառն 451),
Ի Ներսէհապատ (Ամբ Տեառն 482),
Ի Սարդարապատ, յԱպարան եւ ի Մարտունական (Ամբ Տեառն 1918),
այլ եւ ի Շուշի (Ամբ Տեառն 1992)

*Ամն փոքրիկ այժմիկ հնչի որպէս մայիս,
Բայց ի Հայկայ ահեկան էր ընդ այլ ամիս
Եւ ահ եղեւ նաեւ սարսուռ առ թշնամիս,
Որք չարակամ կամ ոխակալ եղեն երկրիս:*

*Մինչ ի Քրիստոս ի Զ. դարուն ամրոց Տիգրայ,
Անառիկ բերդ, որ ժառանգեալ ի Թորգոմայ,
Նաեւ Զուգայ, որ կառուցեալ յԱսքանազայ,
Ի մարտ ելին ընդ բռնաւոր Դարէհ արքայ:*

Իսկ պատմութիւն է շար կենաց,
Ծանեա՛ զգին յաղթանակաց,
Եթէ սոքա ոչ լինէին,
Ոչ գայր եւ ժամն յաջորդին:

Յառաջին դար Խառան եղեւ պարսից խարան
 Նախաշաւեղ յաղթանակացն հայութեան,
 Յետ Գալստեանն ի դարին Ե. մեծ Աւարայր,
 Լ. ամ յետոյ Ներսէհապատ ծաւալանայր:

Բայց

Թէ ի 28 մայիս ամսեան.
 Ի ՊՂ. [1441] թիւ մեծ Թորգոմեան.
 Ոչ գոյր ժողով համագգական.
 Եւ վերադարձն Աթոռոյն.
 Ոչ հաստատէր ի հին կենտրոն,
 Գուցէ եւ հայքն ցրուէին.
 Ի չորս կողմանս աշխարհին:

Եւ դաշտն արեան, որ անուանիւր Սարգարապատ
 Ի նախորդից իւրոց առաւ զոգի անպարտ,
 Մեր հայրենին շնորհեաց զանյաղթ զինուորս իւր,
 ՅԱպարանի կործանեցաւ անկոշըն հիւր:

Արդ նոր արեւ ծագեաց յԱրցախ, որ եւ Խաչէն,
 Առիւծ մարտիկք, անմահ հերոսք են ապաքէն,
 Որք քաջաբար արհամարհեալ զմահ կենաց
 Վաղվաղակի պսակ բերին յաղթանակաց:

Առ ի ստորոտս մեծ լերին Արարատոյ
 Հայք վայելեն ըզբարի կամս Աստուծոյ,
 Իւր զաւակօքըն ամրանայ հողն հայրենի,
 Եւ իւր մանկամբք հըզօրանայ Եկեղեցի:

Արդար գործիւք, արի սրտիւք եմք մեք կանգուն
 Եւ հաւատովք առաքելոցն մշտարթուն,
 Կրօն, լեզու եւ հողն սուրբ մեք միշտ պահեմք,
 Լուսաւորչեան կանթեղն անշէջ պայծառ առնեմք:

Միշտ՝ ւ հանապազ յիշեմք զհերոսս մայիսեան,
 Որք յաղթաբար ի սէր ազգիս մարտիւք անկան,
 Որք յԱւարայր, եւ որք յառաջ կամ անազան
 Ի յուշ հայոց ի միասին անմահանան:

